

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէճ.
Գաւառացի . . . 2 լ. Երա
Վեցամս . . . Կ. Պոլսոյ . . . 3 Մէճ.
Գաւառացի . . . 1 լ. Երա
Օտար երկիրներու . . . 50 Ֆր.
Մանուկան տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :




ԼԵՐԱՔԵՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Պարս քննադատ իրազրաց ճանրու-
ծալքը Խմբագրութեան վրայ է :
Իրազրաց վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն Խմբագիրը
— Յնորէնին պիտի ուղղուի, Ղալա-
թիան Սանտրոքըլար շատուսի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չիմարած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յողուած, և՛
ետ չեն տրուիր :



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 26 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Դադողոյ աղգային ժողովն հասա-
րակային կըրթութեան նախարար Պ.
Ժիւլ-Ֆէրիի առաջարկած օրինաց ծը-
րագիրը վիճարանութեան դրուէ ինչ-
պէս յայտնի է, այս ծրագիրը բոլոր
Դադողոյ մէջ մեծ յուզմունք պատ-
ճառեց, եւ պիտի տեսնենք բողոքեցին,
և կըրտականք ու յետագիւմսկանք
ազմութիւն հանդիսանալով դէմ է յայտնա-
նակէ մ'ի վեր կըրտականք տեսնե-
լով որ իրենց աղգեցութիւնը ձեռքէ
կենցիկ, աղատ համարարաններ կը
հիմնենք բարձրագոյն ուսմանց, ուր
աշակերտը դաստիարակուելով, պահ-
պանողական սկզբանց մէջ պիտի մեծ-
նային : Պ. Ժիւլ Ֆէրիի ծրագիրը պե-
տութեան համարարաններէ դատ ու-
րիչ ոչ մի կըրթական հաստատութեան
վրայ իրաւունք չէր ձանչեր՝ աշա-
կերտաց քննութիւնը կատարելով ա-
նոց Ակրէթէ, Տօքթօր, Լիւսանսիէ,
Պաշլիէ համարարանական աստիճան-
ներ տալու, որք պետութեան հա-
մարարանաց առջև միայն կանոնա-
ւոր քննութեամբ կրնան ընդունուիլ :
Այս կերպիւ մասնաւոր վարժարաննե-
րն ու համարարանները պետութեան
հսկողութեանը կենթարկին :

Խորհրդարանական յանձնախումբ-
ըն տեղեկաբեր Պ. Սքուէր երես-
փոխան ընդարձակ տեղեկագիր մը
ներկայեց, ուր զօրաւոր փաստեր և
վկայութեամբ կը հաստատէ մաս-
նաւոր վարժարանաց վրայ պետու-
թեան հսկողութեան իրաւունքը : Բայց
ուրիշ վկայութիւններ, որոց մէջ կը
տեսնուին Պ. Թիէրի, Կիզոյի և ու-
րիշներու անունները, Պրօֆի դուք-
սը (ներկայ Պրօֆի դուքսին հայրն)
1844 ին երեսփոխանաց ժողովոյ ար-
ւած մէկ տեղեկագիրն մէջ այսպէս
կըսէր .

«Այն մեծ շահուց մէջ, զորս
մեր պարտքն է կանոնաւորել մաս-
նաւոր և յաջորդական օրէնքներով,
պէտք է բմբունել նաև հասարակա-
յին կըրթութիւնն և ուսուցչութեան
ազատութիւնը : Սահմանադրութիւնն
այս երկուքն իրարմէ չբաժնէր : Հա-
սարակային կըրթութիւնը պետութեան
կողմէ կը արուի, իսկ աղատ ուսուց-
չութիւնն է մասնաւոր անձանց կող-
մէն իրենց անուամբ արուած ուս-
մունքը : պարզ քաղաքացիներ իրա-
ւունք ունին դպրոցներ հիմնելու և
կառավարելու, պետութեան վար-
ժարանաց նման, օրինաց համեմատ
շարժելով և իշխանութեանց հսկողու-
թեան ենթարկելով մնալով . . . : Պե-
տութիւնը կաւանդէ ուսմունքը ժո-
ղովրդեան պիտոյից համեմատ, բայց

ուսուցչութեան իրաւունքը միայն ի-
րեն չպատկանիր, զոր անհատներն
ևս կրնան իրեն պէս 'ի դործ դնել :
Բայց մինչև ցարդ Գաղղիոյ մէջ ան-
կապար աղատութիւն չենք ձանչած .
ուսուցչութեան մասին միթէ ուրիշ
կերպ լինիլ կարելի՞ է : «Եթէ հըրա-
պարակաւ մարդոց հետ խօսելու, և
թէ արդէն ձեւակերպեալ մտաց վը-
րայ մամլոյ միջոցաւ մինչև աստիճան
մ'աղգեցութիւն դործածելու իրա-
ւունքն իւր դործագրութեան մէջ
կանոնի ենթարկուելու պէտք ունի,
միթէ կարելի՞ է որ դաստիարակու-
իրաւունքն, ո՛չ միայն իւր զաւակները
— քանզի առանձին դաստիարակու-
թիւնն անբռնաբարելի և նուիրական
է — բայց այլոց զաւակները դաստի-
արակելու, իւր շուրջն հարկւրաւոր
պատանիներ դուժարելու և տակա-
ւին խակ միտքերու վրայ անսահման
աղգեցութիւն դործածելու իրաւուն-
քը շարունակ և 'ի մասնաւորի հա-
սարակութեան հսկողութեանը դուրս,
կարելի՞ է, կըսենք, որ այսպիսի ի-
րաւունք մ'առաջին եկողին թող տըր-
ուի, առանց իրեն հարցնելու թէ
ո՞վ է, ուրիշ՞ կուգայ, ի՞նչ են իւր
արժանիքն ընտանիքներու վստահու-
թեան : »

Նախարար Պ. Ժիւլ-Ֆէրի պաշտ-
պանեց այս սկզբունքը թէ պետու-
թիւնն առանց ուսուցչութիւնն իրեն
մենավաճառ ընելու՝ իրաւունք ունի
դաստիարակութեան վրայ հսկելու :
Պ. Ժիւլ-Ֆէրի հաստատեց թէ կըրդե-
րական վարժարաններու մէջ դուրած
ուսմունքն ու դասագիրքերը կը սով-
րեցնեն թէ պէտք է աշխարհական
իշխանութիւնն հոգեւորականին հը-
նազանդի, և արդի ընկերութեան
դէմ ամենութիւն կը տածեն : Աշա-
կերտաց արուած դադախարը միա-
պետութիւնն մ'է Պապին հրամանաց
ներքէ : Ուստի ծանր և ստիպողա-
կան վստահ մը կայ, ըսաւ Պ. Ժիւլ-
Ֆէրի, որոյ դէմ ներկայ ծրագիրը
դարման պիտի տանի :

Այս խնդիրը մեր աղգին համար
ևս մեծ կարեւորութիւն ունի, որոյ վրայ
Ուսումնական Խորհրդոյ և Վեդային
ժողովին ուշադրութիւնն հրաւիրել
արժան կը համարուի : Արդէն շատ
մը Հայ աշակերտներու օտար վարժա-
րաններ կը յաճախեն, ուր ծնողք ի-
րենց զաւակները կը փոխադրուեցան
կը զրկէին, առանց մտածելու թէ
ինչ է անոնց արուած դաստիարա-
կութիւնը, թէ ինչ սկզբունքի մէջ
պիտի մեծնան իրենց զաւակները, և
թէ ինչ հսկողութիւն կարելի է այն
վարժարանաց վրայ : Չեմք սխալիլ
եթէ ըսեմք թէ օտար և անկախ վար-
ժարաններն աղղին վնասակար եղած
են, բայց ծնողք աղղային բարձրա-
գոյն վարժարան չդնենք իրենց ան-
հատաւ դրեթէ կ'ստիպուեն իրենց

զաւակներն օտար վարժարաններ դը-
նելու : Արդ՝ ժամանակէ մ'ի վեր
մասնաւոր վարժարաններ բացուած
են, ուր ծնողք միշտ միեւնոյն կը
փոխադրուեցան իրենց զաւակները
զրկեն, առանց խորհելու թէ ինչ հը-
րապարակային հսկողութեան միջոց
ունին իրենց ձեռքն այն մասնաւոր
վարժարանաց վրայ, որոց անօրէնե-
րն անկախ են որ և է պատասխա-
նատուութենէ և համարատուութենէ :
Ուրեմն իրաւունք ունիմք ըսելու թէ
այս խնդիրն ուշադրութեան արժա-
նի է . աղղը պէտք է ամեն միջոց 'ի
գործ դնէ՝ որչափ կարելի է՝ Հայ
մանկուոյն մասաւր վարժութիւնն օ-
տար ինամոց չթողու, և Հայ ման-
կանց համար բացուած մասնաւոր
վարժարանաց վրայ աղղային հըսկու-
ղութիւն մը հաստատուի :

ԱՏԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Անգլիոյ Լոյդոնի Խորհրդարանին յանձն-
15/27 է նախն .

ՀԱՅԱՍՏԱՆ

(Շար. տես թիւ 2539)

Լորտ ՍԱԼԻՍՊՐԻԻ հետեւեալ կեր-
պիւ կը շարունակէ .

Աղիւ բարեկամիս (Լորտ Քար-
նարօնի) յիշած չարիքներն ի՞նչպիսի
բաներ են : Ինք ամենէն աւելի պեր-
ճախօսութեամբ դանդաղեցաւ սա
բանին համար թէ Թուրքիոյ դատա-
րանաց մէջ սուտ վկայութիւնը յու-
ճախ տեղի կ'ունենան : Բայց Թուրք
կառավարութիւնն ի՞նչ միջոցաւ
կրնայ դարման տանիլ այդ չարի-
քին, որ միայն Թուրքիոյ յատուկ
չէ, և երբ աղիւ բարեկամ այդ-
չարիքը Թուրք կառավարութեան
մէկ ժառանգական ավար կը հասնի,
կարծեմ թէ Բրիտանական թագին
Արեւելեան երկիրներէն միայն ժա-
մանակակից պատմութեանն ըստ բա-
ւականի ուշադրութիւն չէ ըրած :
Էս նմանօրինակ դանդաղեցաւ լսած
եմ Հնդկաստանի այլ և այլ տեղե-
րուն համար ալ : Չգիտեմ թէ մինչև
ս'ր աստիճան ճշմարիտ են, բայց կա-
տարեյապէս տեղեկութիւն ունիմ թէ
Թուրքիոյ մէջ սուտ վկայներու դէմ
եղած դանդաղեցաւ չափ Հնդկաս-
տանի մէջ ալ դանդաղեցաւ տեղի ու-
նեցած են : Աղիւն այս չարիքն ալ
անոնցմէ է, որոց դարման տանիլ
գլխաւորապէս Թուրքիոյ կարողութեան
դուրս է, և կը կարծեմ թէ աղիւ
բարեկամիս այդ նիւթին վրայ խօսիլն
անպատշաճ էր :

Աղիւ բարեկամ Մահմէտական
Թուրք ժողովրդեան կողմանէ հալա-
տակակից Բրիտանիոյ դէմ 'ի գործ
դրուած հարստահարութեան վրայ

ալ շատ խօսեցաւ : Ցաւալի ճշմար-
տութիւն մ'է այս, բայց որ և է կա-
ռավարութեան մը դարձանելիք բանը
չէ : Այս չարիքները դարեւր ժա-
ռանգութիւնն են, ժողովրդեան ա-
ւանդութիւնն են, անոնց սրտերուն
մէջ արմատացած են, և եթէ այդ չա-
րիքները պիտի դարձանուին, քաղա-
քագիտաց և գլխաւորապէս դոնեւիլը
միջոցաւ չէ որ պիտի դարձանուին :
Թուրքիոյ բարենորոգմանց վրայ մեր
ըրած խորհրդածութեանց մէջ՝ այս
խտիներէն առածը միտքերնիս կու-
գայ թէ «Ինչ է ինչ» առանց Բուր-
կաւարեալեան անօգուտ է օրինա-
գիրքերը կամ գլխաւորապէս խոստովանելը
բաղմունքներ՝ եթէ կը
յուսար որ աղիւ միջոցաւ պիտի
կրնայ ժողովրդեան մը բնութիւնը
կամ խտնաւածքը փոխել :

Իմ աղիւ բարեկամ տասանոր-
դի տրոյ դրութեան Թուրքիոյ մէջ
պահպանութեանը դէմալ խօսեցաւ :
Ամենա ալ գիտեմք թէ մեծ զեղծում
մ'է այդ, բայց գիտեմք միանգա-
մայն թէ քանիցս անոր վնասակարու-
թիւնը ցուցուած և Գուռն ալ քանիցս
խոստովանած է դայս : Բայց միթէ
Թուրքիոյ մէջ միայն այդ դուրսիւ-
նը կը պահպանուի թէ՛ Յունաստան
ալ նոյն դրութիւնը կը դործագրէ :
և թէպէտ յիսուն տարիէ 'ի վեր ան-
կախութիւն ձեռք բերած է, տա-
կաին չյաջողեցաւ չնչել այդ դը-
րութիւնը : Կիսորոսի նոր կառավա-
րութեան մէջ ես փորձեցի վերցնել
դայդ, բայց տեղեկութիւն տրուե-
ցաւ ինձ թէ անկարելի էր, որով
հետեւ Սրեւերեան երկիրներու մէջ
տարի մը երաշտութիւն կը լինի և
յաջորդ տարին առատութիւն . և ե-
թէ որոշ տարիք դրութիւնն հաստա-
տի, ինչպէս կը լինի Հնդկաստանի մէջ,
պիտի պարտաւորին հողին արժէքը
կոտրել, կամ երաշտութեան ժա-
մանակ ժողովրդը վաշխառուաց
ձեռքը պիտի մնայ : Թէպէտ կը հա-
ւատամ թէ տասանորդի տրոյ դը-
րութիւնը պէտք է վերնայ, բայց վաղ-
կենի մը մէջ գրչի հարուածով մը չը
կրնար ջնջուիլ :

Աղիւն պէտք եղած բան մը կայ,
զոր քանիցս յիշած եմ՝ այն է Փոքր
Ասիոյ մէջ զօրեղ աստիճանութեան մը
կազմութիւնը՝ ժողովրդեան կեանքն
ու ստացուածքն ապահովելու և իւր-
նական ցեղերուն աւաղակութիւննե-
րը զինու զօրութեամբ զօղելու հա-
մար : (Մոլէ Երէ, Գոլէ Երէ) :

Էս այնպէս կը հաւատամ թէ Թուր-
քիոյ մէջ տէրութեան պաշտօնէից
կաշառակերութեանը նկատմամբ ե-
ղած ամբաստանութիւնը աւելի ան-
ցելոյն կը վերաբերին քան թէ ներ-
կայ ժամանակին : Էս չեմ ուրանար
Թուրքիոյ մէջ կաշառակերութիւն կե-
նալը, բայց ոչ այն ընդարձակութեամբ,

որչափ կար անցեալ ժամանակաց մէջ Թուրքիոյ պաշտօնատարաց ընթացքն Եւրոպայի աչաց առջինն է :

Տարակոյս չկայ թէ Գոսն իւր խոտորմները չգործողութեան համար պարտաւորուածութիւն ունի Եւրոպայի իրողութիւնն այս է որ Գոսն ալ ուրիշ տէրութեանց պէս իւր ձեռքը չգտնուած դրամը չկրնար ծախսել : Երբ այն երկրանիկ ժամանակը դայ , յորում Թուրքիոյ մէջ քաղաքական ճնշումը վերանայ , վերջին աշխարհայի պատերազմին բացած վէրքերը դարձանուին , կառավարութեան ծախքերը նուազին , և երբ մարդիկ կարող լինին դաշտերն երթալ և երկրագործութեամբ զբաղելով կառավարութեան հասոյթն ալ աւելցնել , և վերջապէս երբ խաղաղութեան օրհնութիւնները պատերազմի աղետից յաջորդեն , Գոսն բարենորոգում պիտի ընէ :

Վերջին բաղադրատարաւ պատերազմին ժամանակ տէրութեան ամեն երկրներէն մարդիկ զինուորութեան առնուեցան , հետեւաբար բարենորոգում ընելու անկարողութիւն կայ : Երբ փոքր-Ասիոյ յատուկ բան մը չէ այս : Եւ յիշեմ որ լրագրի մը մէջ կարդացի թէ այդ երկրին շատ մը տեղերը սով կայ , բայց այդ տեղերն զգացուած գլխաւոր սովը դաշտերը մշակող մարդոց սով մ'է : Երկրն հիւժեղաւ բնութեամբ մարդոց զինուորագրութեամբն և սպանմամբ , և երկար ժամանակ պէտք է մինչև որ այդ վէրքերը դադուին : Իսկ այս պարագայից վրայ պնդեցի յուսնելու համար թէ Թուրքիոյ պէս տրակարացած երկրի մը համար չկրնար սպասուիլ որ բարենորոգման ամեն նարձք վիճակին մէջ գտնուող Բերկանայ երկրի մը պէս փութով դործէ : (Մ'ի՛նք քէն , Գ'ի՛նք քէն :)

Բայց այս փաստերը մէջ բերելու նպատակը յուսնել չէ թէ Անգլիոյ կառավարութիւնն այս շարեաց դարձանուելուն նուազ փափաքող է : Ընդհակառակն , Անգլիական կառավարութիւնն ամեն առթիւ պիտի ջանայ այդ շարեաց վրայ Դրան ուշադրութիւնն հրաւիրելու : Կը յուսամ 'ի մօտայ քանի մը թուղթեր ներկայացնել ժողովի՝ յուսնելու համար թէ ինչ ըրած էր դիւանագիտութիւնը Ձէյթինի համար , և այդ թղթից ընթերցանութենէն պիտի հասկցուի թէ մեր դիւանագիտական դործականարներն եռանդուն ջանքեր ըրած են շարեաց բարձմանը համար : Դոսն յանձնախմբեր զրկեց Հայաստան , բայց ասանք շատ փութով չեն դործեր : Սակայն չեմ կարծեր թէ Գոսն կարգուած անձինք Թուրքիոյ պետական անձանց միջին տեսակէն վար մարդիկ լինին : Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը Թուրքիոյ մէջ իւր հիւպատոսաց թիւը շատ աւելցուց , որպէս զի ամենայն ինչ տեսնեն , տեղեկագրեն , և տեղի ունեցած բոլոր չարքներն ու զեղծումները ժամանակին Դրան ուշադրութեան ներկայացունին : (Մ'ի՛նք քէն , Գ'ի՛նք քէն :)

Միանգամայն կողմէ յայտնել թէ այս բարենորոգումները Դրնէն ստանալու համար մեր ըրած բոլոր ջանքից մէջ մեր պաշտպանեցինք և պիտի շարունակեմք պաշտպանել Սուլթանին վեհապետութիւնն՝ իր նշանայն միտի իշխանութեան որ կրկնեայ կամ կրնայ կենալ Թուրքիոյ մէջ . և կը պարտիմ խոտորմներ թէ ներկայ Սուլթանը ջերմօրէն պնդած է իւր կառավարութեան պարտականք եղած այդ զեղծումները մարքելու համար : Նոր պաշտօնագրերէ հասկցած իսկ նայելով , Սուլթանին այդ փափաքը բա-

ղարձակագէտ անկեղծ է , և Սըր Հէնրի Լէյքս ալ այդ կարծիքն ունի , ինչպէս որ Ձեր մէջէն բաղմնայ լաւ ծանօթ է : (Մ'ի՛նք քէն , Գ'ի՛նք քէն :)

Սկսած իսկ պէս պիտի վերջանում ըսելով թէ առհիւ բարեկամիս կողմանէ Անգլիական կառավարութեան վերադրեալ պատասխանատուութիւնը կը մերժեմ : Որովհետեւ Դրնէն իւր երկրներուն մէջ բարենորոգմանց դործողութեան համար պայմանագրութիւններն ձեռք բերած եմք , պարտականութեամբ կապուած չեմք : Բայց երբ այդ պատասխանատուութիւնը կը մերժեմ , ըսել չեմ ուզեր թէ Անգլիական կառավարութիւնը Պէրլինի դաշնագրութեամբ մեր վրայ ինկած ո՛ր և է պատասխանատուութիւն մը կը մերժէ : Մեր այդ դաշնագրութեան համաձայն դործած եմք , և պիտի ընեմք ինչ որ դիւանագիտութիւնը կրնայ ընել՝ նուազեցնելու համար այդ չարքներն , և յստա՛յ բերելու համար այն փրկարար փոփոխութիւններն ուրովք միայն կարելի է Օսմանեան տէրութեան հաստատութիւնը պահպանել : (Մ'ի՛նք քէն , Գ'ի՛նք քէն :)

Իսկ Սալթանի բանախօսութիւնն հոս կը վերջանայ :

Մ'նայեալ հետեւելու լուսով

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սթէնք 7 յուլիս
Արտաքին գործոց նախարար Պ. Տէլեանի ծանուցադիր մը հրատարակելու առաւ , որով Հելլենական կառավարութիւնը վեհափառովին ցոյց տուած Թուրքոս-Հելլենական սահմանագծին նըկատմամբ բնաւ զիջում չընդունիր :

Լոնտրա 7 յուլիս
Հարաւային Աֆրիկի անգլիական բանակը Չուլուստանայ մէջ իւր յառաջնական զացունն սկսաւ և կը շարունակէ : Սակայն թշնամութիւնը դադարեցան մինչև որ Անգլիացեաց կողմանէ Սթէնիւայթ թագաւորին եղած առաջարկութեանց պատասխանը գայ :

Ս. յ. Կոնստանտնուպոլիս
Պէրլին 7 յուլիս

Վլաքս Յայթունի լրագրողը կը ծանուցանէ թէ երկրագործութեան հրաժարեալ նախարար Պ. Յիլէտէնիմալ Պիլմարը իշխանը մեղադարար հրաւիրած է :

Պ. Պէրլինի երկրագործոց նախարար անւանեցաւ :

Բեդրաստուրի 7 յուլիս
Կը ծանուցուի թէ Փէրլայի մէջ (Ռուսիա) զիւղացիք արտադրութիւն մը հաներ են , և Իրքուի մէջ (Սիպերիա) ալ հրդեհներ ծագեր են :

Բեդրաստուրի 7 յուլիս
Խաբանա՛ն առնուած լրաց յայտնով , Ձինացիք Քաչկարի երկիրը դրուեր են և բազում կոտորած տեղի ունեցեր է : Մահմետական բնակիչը կը փախչեն Քաչկարէն :

Վարնա 6 յուլիս
Պաթէնպէրի իշխանն այս առաւօտ հոս հասաւ , և փառաւոր ընդունելութիւն մ'ուղարկուեց : Իշխանն յայտարարութիւն մ'ուղարկեց առ ժողովուրդն :

Լոնտրա 7 յուլիս
Դնդապետի տեղակալ Սըր Քալմանեարի՝ Քապուլի Անգլիական դեսպան անուանեցաւ :

Լոնտրա 7 յուլիս

Օսմ. Բոսն.	11 43/16
Փոլս.	4865 45 1/4
»	1869 14 3/8
»	1871 55 1/2
»	1872 22 1/2
»	1873 43 3/8
»	Երկուստեք
Անգլ. Բոսն.	98 3/16
Փոքրիկ 7 յուլիս.	
Օսմ. Բոսն.	11.97 1/2
Գաղղ. Բոսն.	5 0/0 82.62 1/2
»	» 84.85
»	» 5 0/0 118.65

ՆԵՐՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պալլադիոյ իշխանին մայրաքաղաքի գաղն և վառնա ուղեորին երէկ համառօտիւ ծանուցինք :

Ռուսական արքունի կոստանդին Յեծ-Պալլա շողենաւն որ երեքշաբթի օրը Պրինտիպէն մեկնած էր , շաբաթ օրը ժամ 7ին միջոցները Տօլմա-Պաղլէի առջև Խալիսի ձգեց : Մայրաքաղաքիս Ռուսական դեսպանն անմիջապէս կոստանդին շողենաւն երթալով ողջունեց Պաթէնպէրի իշխանին , որ յատկապէս կայսերական պալատան կողմանէ զըրկուած երկու նաւակներով ծովու զերքն հանուեցաւ , ուր երկու արքունի կառքեր և խումբ մը հեծեւազօր կապանէին : Լօպանօֆ իշխանը Պալլադիոյ իշխանին կ'ընկերանար : Երբ յիշեալ կառքերն ելլալով պալատն հասան , կայսերական նուազարանք հնչել սկսան : Իշխանը պալատն մէջ քանի մը վայրկեան հանգչեցեալ գաղնից դահլիճը տար : Եւ յիշեալ Պալլադիոյ իշխանին վաշտն , Պալլա Օսման փաշան , Ալէքսանտր Գարաթիոսօրի փաշան և Նաւալ փաշան ներկայ էին ընդունելութեան , Վեհ. Սուլթանն օտարի վրայ կեցած էր , և սիրով ընդունեց Պալլադիոյ իշխանին , և ձեռքը սեղմեց : Տեսութիւնն երկար չտևեց , Պալլադիոյ իշխանն ըսաւ ի մէջ այլոց թէ ջանք չպիտի լինայի Պալլադիոյ բարդաւաճման համար : Վեհ. Սուլթանն ալ յայտնեց թէ իշխանը պէտք եղած ջանքը պիտի ընէ որպէս զի Պալլադիոյ լուս յարաբերութիւններն ունենան Ն. Վեհափառութեան կառավարութեանը հետ : Կըսուի թէ իշխանին հաստատութեան փերմանը տակաւին պատրաստ չլինելով , չէ կրցած իրեն յանձնուիլ , և յատուկ պաշտօնատարի մը միջոցաւ Պալլադիոյ պիտի զրկուի :

Պաթէնպէրի իշխանն ընդունելութեան դահլիճէն ելնելով՝ ուրիշ սրահ մը տարուեցաւ , ուր օշարակներ բերուեցան : Ժամ 9 ին , իշխանը կոստանդին շողենաւը վերադարձաւ , ուր Եւրոպական մեծ տէրութեանց Կ. Պօլսոյ դեսպաններուն առաջին թարգմաններն երթալով ողջունեցին զինքը :

Նոյն միջոցին Կ. Պոլսոյ Պալլադիոյ կողմանէ պատգամաւորութիւն մը Ռուսական շողենաւն երթալով իշխանին ներկայացաւ , Մայրաքաղաքիս Պալլադիոյ շողենաւ վարձած էին Մարմարա ծովն երթալով իշխանը գլխաւորելու համար , բայց ստիպանութիւնը թող չտուու . առկից զատ , կոստանդին շողենաւը մարդ չտանելու արգելք եղած էր նաւակայ . այս պատճառաւ Պալլադիոյ պատգամաւորութիւնը կազմուց տանի չափ անձինք առանձին առանձին հաղիւ կրցին Ռուսական շողենաւն երթալ : Պալլադիոյ իշխանին նկատմամբ ամեն տեսակ ցոյց արգելելու համար՝ շաբաթ օրն առաւօտէն 'ի վեր վոտիսի թէ՛ Եւրոպական և թէ՛ Ասիական ծովու զերքն վրայ զօրք դրուած էր : Հետեւաբար Պալլադիոյ չկրցին իրենց իշխանը պատուել :

Քուրթէ Տ'Օրիան կըսէ թէ վարձու բռնուած չորս փոքրիկ շողենաւուց վրայ հինգ հազարի չափ Պալլադիոյ պետի գտնուէր , մասնաւորապէս Ռօպերթեան վարժարանի , Պէնէրի Յուսոյ դպրոցին և Խսկիւսաւրու Ամերիկացեաց դպրոցին արու և էր Պալլադիոյ աշակերտներէն 150ի չափ տղայք , որք ծաղիկ փունջեր պիտի ընծայէին Պալլադիոյ իշխանին : Յիշեալ չորս շողենաւերուն ամեն մէկուն

վրայ նուազածուաց խումբ մը պիտի գտնուէր : Վերջապէս ըսաւ Քուրթէ Տ'Օրիանի , Պալլադիոյ փառաւոր պատրաստութիւններն տեսած էին , բայց 'ի դերեւ ելան :

Ըսաւ որում կոստանդին շողենաւն ածուի առնելու պէտք ունէր , Պալլադիոյ իշխանը Ռուսական դեսպանին փոքր շողենաւով Պէօլիք-Տէրէ դնաց , և Ռուսիոյ դեսպանատունը ճաշելէ ետեւ , գիշերը ժամ 2ին կոստանդին շողենաւն ելնելով վառնա ուղեորեցաւ , ուր հասաւ Կիւսկի օրը : Թէեւ Բ. Դրան կողմէ իզգէտակն շողենաւը Պալլադիոյ իշխանին արամադրութեան ներքեւ դրուած էր , բայց նա կոստանդին շողենաւով շարունակեց իւր ուղեւորութիւնը :

Պալլադիոյ իշխանը 23 տարեկան բարձրահասակ և վաղեմապէս երիտասարդ մ'է : Մայրաքաղաքիս եկած ժամանակ զորավարի հաղուստ կը կրէր :

Լէվանթ Հէրալտ կ'ըսէ թէ շաբաթ օրը ծովեզրայց վրայ զօրք դուստրուին առիթ տուած է այն զրոյցին՝ թէ նախորդ Սուլթան Մուրատ յանկարծակի մայրաքաղաքէն մեկնելու դիտաւորութիւն ունի եղեր : Բայց այս զրոյցը բոլորովին անհիմն է :

Յաւօք սրտի լսեցինք թէ վաղը լրագրին անօրէն և արտօնաւոր Ֆիլիպ Էֆէնտին շաբաթ օրը բանտարկուեր է : Բայց՝ ինչպէս ինք իւր թերթին մէջ յայտարարած էր , պատժական առեւինն որոշումն ընդունած չլինելով՝ վերաքննութեան դիմած է , և կը լսեմք թէ ճշպարայիլ կարկուտ Էֆէնտին՝ իւր փոխանորդ Ֆիլիպ Էֆէնտին՝ հարկ եղած դործողութեանց ձեռք զարկած է :

Կըսուի թէ քանի մ'օրէն կայսերական հրամանագիր մը պիտի ելնէ Բէտիֆէն իրենց տեղերը զրկելու և Օսմանեան բանակը խաղաղական վիճակի մէջ դնելու համար :

Քաղաքագետութեան մէկ նոր տղաք կը ծանուցանէ թէ պրն ձին արժեքը կտարելուն պատճառաւ՝ հացին օխան 110 փարայէն 115 փարայի հանուած է այս օրէն :

Բ. Դուռը մինչև ցարդ Արեւելեան Բուսնի Վերապետներէն ելեմբուց վերապետուէր Պ. Շմիտ , հասարակային կրթութեան վերապետուէր Պ. Կըրթէֆ և հասարակային շինութեանց վերապետուէր Վիլքովիչ պէյն իրենց պաշտօնին մէջ հաստատուեց , և կըսուի թէ դատական վերապետուէր Պ. Քէսաքօֆի ընտրութիւնը վաւերացնել չէ ուղած :

Նախկին Մեծ-Եպարքոս Մահմետ Նէտիմ փաշան իւր բնակութիւնը Կ. Պօլսէն Պէպէրի ամրանոցը փոխադրեց :

Երէկ փարիզէն եկած Հափսի հեռագիր մը կը ծանուցանէր թէ Գաղղիոյ մէջ այս տարի հնձոց անբաւականութեան պատճառաւ՝ դուրսէն 500 միլիոն հարկւրալիար ցորեն Գաղղիա բերել հարկ պիտի լինի : Լէվանթ Հէրալտ կ'ըսէ թէ Գաղղիոյ մէջ տարին ընդ ամենն 108 միլիոն հարկւրալիարի չափ ցորեն կ'ապաւի հետեւաբար վերայիշեալ 500 միլիոն հարկւրալիարն 50 միլիոն պէտք է լինի :

Միջերկրական ծովու Գաղղիական նաւախմբին անցեալ տարուան ընդհանուր հրամանատար Լըմէօն Ժոզֆապետն հելլենական նաւատորմին

අයුතුය යනු පමණක්

14	15	Պէջիւբքաւ. Պէյքօղ, Բաշլս. Գաճիկ. Ա. Հիւսար, Գաճնտ. Վանիք. Չէնիկ. Պէյլլ. Գուզլի. (Աման զհող) :	12
11		Պէյքօղ, Բաշլսաղ, Բ. Գաշաւ մահ. Գաճիլըճաւ, Ա. Հիւսար, Գաճնտիլլի, Վանիք. Չէնիկըճի, Պէյլլ. Գուզլի. Գաշա :	19
11		Արնաթ. Վանիքըճի, Չէնիկ. Պէյլլ. Գուզլի. Գաշա :	4
12		Պէյիւբքաւ. Թար. Պէյքօղ, Բաշլս. Գաճիկ. Ա. Հիւսար, Գաճնտ. Վանիք. Չէնիկ. Պէյլլ. Գուզլի. Ուրբաթօրերը ժամ 12 1/2 շէն) :	17
1	30	Պէյիւբքաւ. Թար. Պէյքօղ, Բաշլսաղ. Բ. Գ. մահ. Գաճիկ. Ա. Հիւսար, Գաճնտ. Վանիք Չէնիկ. Պէյլլ. Գուզլի. Գաշա : (Բաշի ուրբաթի) :	36
3	15	Պէյիւբքաւ. Բաշլսաղ. Բ. Գ. մահ. Գաճիկ. Ա. Հիւսար, Գաճնտ. Վանիք. Չէնիկ. Պէյլլ. Գաշաթաշ :	19

ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս ադա Հէքիմեան

4 30 Իսկ, դուք, Պէյլ Զէնկ, վանիք, Գանտ, Ա. Հիսար, 19
 Գանկ, Բաշապ, Պէյքթօշ :
 3 Իսկ, դուք, Պէյլէրպ, Զէնկ, վանիք, Գանտ, Ա. Հի- 23
 սար, Գանիքձա : (Ուրապթ օրերը էմիրի, Բ. փաշա մահ,
 Բաշապ, Պէյքթօշ :)
 9 Գուզկ, Պէյլէր, Զէնկէլ, վանիք, Գանտ, Ա. Հիսար, 19
 Գանիք, Ռոշապ, Պէյլէօշ, Թարապ, Պէյքիւքտ,
 (Բաշի ուրապթ) :
 9 45 Գուզկ, Պէյլէրպ, Զէնկ, վանիք, Գանտ, Ա. Հիսար, 17
 Գանկ, Բաշապ, Պէյքթօշ, Մէշարպ, Բ. և Ա. Գալաֆ :
 10 30 Դապթթ, Պէյլ, Զէնկ, վանիք, Գանտ, Ա. Հիսար, 19
 Գանկ, Զուրապթլու, Բաշ, Պէյքթօշ, Թարապ, Պէյ-
 իւքտ, (Ուրապթ օրերը Գուզկ.)
 11 45 Գուզկ, Պէյլ, Զէնկ, վանիք, Գանտ, Ա. Հիսար, 12
 Գանկ, Բաշապ, Պէյքթօշ, (Սման դնի) :
 11 30 Գապաֆ, Գուզկ, Պէյլ, Զէնկ, վանիք, Սլանաֆ, 22

ωf	$\mathfrak{A} \cdot \omega f$	$\mathfrak{B} \cdot \omega f$	$\mathfrak{D} \cdot \omega f$
1 30	5 25	11 30	5 25
2	6	12	6
2 30	6 35	12 30	6 25
4	8	4	8
4 30	8 40	4 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	10
3 5	10 30	3 5	10 30
3 45	11	3 45	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5